ՄԵՐ ԶԱՏԻԿԸ՝ ՔՐԻՍՏՈՍԸ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ՄԱՏ. 21.6-9

6 Աշակերտները գնացին ու արեցին այնպես, ինչպես Հիսուսը նրանց պատվիրեց. 7 Էշն ու ավանակը բերեցին, իրենց հագուստները դրանց վրա գցեցին, և Հիսուսը դրանց վրա նստեց: 8 Եւ Ժողովրդի միջից շատերն իրենց հագուստները փռում էին ճանապարհին. ուրիշներն էլ ծառերից ճյուղեր էին կտրում ու ճանապարհին փռում: 9 Եվ առջևից ու հետևից գնացող բազմությունը բացականչում էր ու ասում. «Օվսաննա՜ Դավթի Որդուն (եբր. Սաղ. 118.25), օրհնյա՛լ է Տիրոջ անունով եկողը (Սաղ. 118.26). Օվսաննա՜ Բարձրյալին»: Երբ Հիսուսը Երուսաղեմ մտավ, ամբողջ քաղաքը ցնցվեց: Հարցնում էին. «Ո՞վ է սա»:

Հովհաննես 12.13 – արմավենու ճյուղեր վերցրեց և նրան ընդառաջ ելավ՝ աղաղակելով. «Օվսաննա՜ (Սաղ. 118.25), օրհնյա՛լ է նա, որ գալիս է Տիրոջ անունով (Սաղ. 118.26), Իսրայելի թագավորը»

I. ՄԵՐ ԶԱՏԻԿԸ՝ ՔՐԻՍՏՈՍԸ, ՀԱՂԹԱՆԱԿԱՑ ԹԱԳԱՎՈՐԸ:

Հայ. 1.5 - Եւ Հիսուս Քրիստոս... անդրանիկն է մեռելներից և իշխանը երկրի թագավորների:

*Զաքարիա 9.9 – **ահա քեզ մոտ է գալիս քո թագավորը.** նա արդար ու փրկագործ է, **հեզ և էշի վրա հեծած**, էշի ճագի՝ ավանակի վրա:*

Ինչո՞ւ էշի վրա հեծած: Մեսսիական մարգարեություն.

*Ծննդոց 49.10-11 – Չի պակասելու իշխանությունը Հուդայից, ոչ էլ օրենսդիրը՝ նրա երանքից, մինչև որ գա **ՍԵԼՈՎԸ**. և նրա՛ն են հնազանդվում ժողովուրդները: Նա իր ավանակին որթից կկապի և ազնիվ որթից՝ իր **էգ էշի քուռակին**. իր **պատմուճանը կլվա գինով** և իր հանդերձը՝ խաղողի արյամբ:*

II. ՄԵՐ ԶԱՏԻԿԸ՝ ՔՐԻՍՏՈՍԸ, ԱՍՏԾՈ ԿՈՂՄԻՑ ԸՆՏՐՎԱԾ ԳԱՌԸ:

Հովհաննես 1.29 – Հաջորդ օրը Հովհաննեսը տեսավ Հիսուսին, որ գալիս էր իր մոտ, ու ասաց. Ահա Աստծու Գառը, որ իր վրա է վերցնում աշխարհի մեղքը:

- ***Հիսուսը Երուսաղեմ եկավ Զատիկի շաբաթը՝ գառների ընտրության օրը:***

- *Համաձայն Ելից 12.3-ի՝ յուրաքանչյուր մարդ իր ընտանիքի համար մի գառ պետք է ընտրեր առաջին ամսվա (Նիսանի) տասներորդ օրը: Գառը պետք է լիներ մեկ տարեկան արու, առանց արատների: Ընտանիքն այնուհետև պահում էր գառը մինչև տասնչորսերորդ օրը (Ելից 12.6), իսկ հետո մորթում երեկոյան Զատիկի ընթրիքի համար:*

- *Հիսուսի օրոք արձանագրված է, որ միայն անհատների և ընտանիքների կողմից մեկ Պասեքի ժամանակ զոհաբերվել է 255,600 Զատկի գառ:*

  Մար. 15.25 – 25 Երրորդ ժամն էր, երբ նրան խաչեցին: 33 Վեցերորդ ժամին ամբողջ երկրի վրա խավարը տիրեց մինչև իններորդ ժամը: 34 Իններորդ ժամին Հիսուսը բարձրաձայն աղաղակեց ու ասաց. «Էլի՛, Էլի՛, լամա սաբաքթանի», որ թարգմանվում է՝ «Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ լքեցիր ինձ» (Սաղ. 22.1):

- *«Աստված կհոգա իր ողջակեզի գառը» Ծննդոց 3, 22.8*

- *Սողոմոնն կառուցեց Տիրոջ տունը Երուսաղեմում՝ Մորիա լեռան վրա... (Բ Մնաց.3.1):*

- *«Արժանի է մորթված Գառը» Հայտ. 5.12*

III. ՄԵՐ ԶԱՏԻԿԸ՝ ՔՐԻՍՏՈՍԸ, ՄԵԶ ՀԱՄԱՐ ՄՈՐԹՎԱԾ ԳԱՌԸ (Ա ԿՈՐ. 5.7):

- ***Հայտնության գրքում քսանից ավելի անգամներ Քրիստոսը հիշատակվում է որպես Գառ:***

  Տեսա, որ գահի, չորս կենդանիների և երեցների մեջտեղում ասես մորթված մի Գառ կար... Նրանք բարձրաձայն ասում էին. Մորթված Գառն արժանի է ընդունելու զորություն, հարստություն, իմաստություն, ուժ, պատիվ, փառք և օրհնություն: Եվ նրանք հաղթեցին նրան Գառան արյունով ու իրենց վկայության խոսքով և իրենց կյանքը չսիրեցին մինչև մահ (Հայտնություն 5.6, 5.12, 12.11):

  Մար. 15:37 –37 Եւ Յիսուսը մեծ ձայն արձակեց՝ եւ Հոգին ավանդեց: 38 Եվ տաճարի վարագույրը վերևից ներքև երկու մասի պատռվեց:

- *Սրբության Սրբոցի առջևի վարագույրները ունեին 18 մետր երկարություն և 9 մետր լայնություն, որոնցից յուրաքանչյուրը ձեռքի ափի հաստությունն էր: Դրանք այնքան ծանր էին, որ երեք հարյուր քահանա էր պետք՝ վարագույրը ամրացնելու համար: (Հրեա պատմաբան Josephus-ի գրվածքներից)*

IV. ՄԵՐ ԶԱՏԻԿԸ՝ ՔՐԻՍՏՈՍԸ, ՄԵԶ ՃԱՆԱՊԱՐՀ ԲԱՑԵՑ ՎԱՐԱԳՈՒՅՐԻ ՄԻՋՈՎ:

*Եբր. 10.19-21 - **19** Արդ, եղբայրնե՛ր, քանի որ համարձակություն ունենք մուտք գործելու սրբարան Հիսուսի արյամբ, **20** Որն մեզ համար նոր ու կենդանի ճանապարհ բացեց **վարագույրի միջով**, որ իր մարմինն է, **21** և մի մեծ քահանա ունենք Աստծու տան վրա.*

Եբրայեցիս 9.28 – նույնպես էլ Քրիստոսը շատերի մեղքերը վեր առնելու համար մեկ անգամ զոհաբերվեց. իսկ երկրորդ անգամ կհայտնվի առանց մեղքի՝ իրեն սպասողների փրկության համար:

Ա Պետրոս 1.18-19 – իմանալով, որ ձեր հայրենավանդ ունայն կյանքից ոչ թե արծաթով կամ ոսկով փրկվեցիք, այլ Քրիստոսի պատվական արյունով՝ իբրև անբիծ ու անարատ գառան:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ